



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. դեկտեմբերին /վերլուծություն/

2006թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 12393 գործարքներ, որոնց քանակը 2005թ. դեկտեմբերի համեմատ աճել է 16.3%-ով, իսկ 2006թ. նոյեմբերի համեմատ՝ 12.6%-ով:

2006թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5589 օտարման գործարքների 90.0% կազմել են առուվաճառքները, 9.7%՝ նվիրատվությունները և 0.3%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36.3%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.9% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. դեկտեմբերին, 2006թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 22.2%-ով, իսկ 2005թ. դեկտեմբերի համեմատ՝ 46.8%-ով: 2006թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.8% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2006թ. նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 25.6%-ով, իսկ 2005թ. դեկտեմբերի համեմատ՝ 50.8%-ով:

2006թ. դեկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. դեկտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2005թ.	դեկտեմբեր 2006թ.	նոյեմբեր 2006թ.
Կենտրոն	180000-1080000	337300	403700	401500
Արաբկիր	115000-895000	266600	323300	321900
Քանաքեռ Զեյթուն	111000-454000	159900	223800	218300
Նոր-Նորք	92000-350000	152700	194500	187300
Ավան	100000-260000	134800	181400	180100
Էրեբունի	105000-347000	133400	197900	194500
Շենգավիթ	106000-400000	163700	206300	202000
Դավթաշեն	110000-284000	166200	216500	205500
Աջափնյակ	104000-450000	153900	192800	192600
Մալաթիա-Սեբաստիա	90000-275000	150000	182800	182300
Նուբարաշեն	60000-137500	92200	117600	117600
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>60000-1080000</b>	<b>173700</b>	<b>221900</b>	<b>218500</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. դեկտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ. նոյեմբերի համեմատ աճել են 1.6%:

2006թ. դեկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 555 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. նոյեմբերի համեմատ աճել է 11.2%-ով, իսկ 2005թ. դեկտեմբերի համեմատ՝ 24.4%-ով:

2006թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. դեկտեմբեր /դրամ/	Միջին գները /դրամ/		
			դեկտեմբեր 2005թ.	դեկտեմբեր 2006թ.	նոյեմբեր 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	60000 - 137000	50300	84000	80000

	Ապարան	21000 - 37000	23600	28000	26600
	Թալին	14000 - 53000	21700	30000	29300
Արարատ	Արտաշատ	39000 - 143000	40800	66000	63300
	Մասիս	36000 - 125000	51600	77000	73600
	Վեդի	23000 - 78000	34200	52000	49400
	Արարատ	19000 - 87000	37100	51000	50400
Արմավիր	Վաղարշապատ	71000 - 200000	74200	106000	101600
	Արմավիր	39000 - 172000	44400	74000	70200
	Մեծամոր	33000 - 123000	25300	48000	46200
Գեղարքունիք	Սևան	28000 - 98000	30100	49000	46900
	Գավառ	20000 - 58000	22400	31000	30600
	Մարտունի	22000 - 111000	36000	44000	42700
	Վարդենիս	13000 - 56000	19200	25000	23200
	Ճամբարակ	8000 - 31000	10700	13900	13900
Լոռի	Վանաձոր	27000 - 202000	42000	62000	58900
	Ստեփանավան	15000 - 79000	22800	30000	28700
	Սյիտակ	32000 - 71000	26700	40300	40300
	Ալավերդի	10000 - 44000	18100	23300	23300
	Տաշիր	11000 - 45000	19800	22000	21800
	Թումանյան	4000 - 11000	5200	5400	5400
	Շամլուղ	2000 - 8000	2700	3000	3000
	Ախթալա	7000 - 16000	10300	10900	10900
Կոտայք	Արովյան	55000 - 207000	77500	122000	118000
	Նոր Հաճն	53000 - 150000	56400	83000	80300
	Բյուրեղավան	23000 - 108000	37000	60000	57400
	Եղվարդ	50000 - 105000	47900	76000	72700
	Հրազդան	21000 - 111000	30200	43000	42900
	Ծաղկաձոր	68000 - 198000	56700	80600	80600
	Չարենցավան	26000 - 98000	35400	52000	51400
Շիրակ	Գյումրի	25000 - 143000	43800	59000	58200
	Արթիկ	20000 - 76000	25400	39000	37700
	Մարալիկ	10000 - 35000	21600	23800	23800
Սյունիք	Գորիս	27000 - 107000	45000	59000	56300
	Կապան	29000 - 123000	31800	56000	55100
	Սիսիան	27000 - 75000	28000	47400	47400
	Մեղրի	25000 - 72000	23500	35300	35300
	Ագարակ	10000 - 50000	17600	23000	21900
	Քաջարան	23000 - 80000	17000	29700	29700
	Դաստակերտ	4500 - 11000	6300	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	21000 - 66000	30600	51600	51600
	Եղեգնաձոր	34000 - 117000	43000	63400	63400
	Ջերմուկ	44000 - 214000	46200	92000	78400
Տավուշ	Դիլիջան	28000 - 109000	34200	58000	56500
	Իջևան	41000 - 209000	38700	74000	67900
	Բերդ	22000 - 71000	25700	33000	31400
	Նոյեմբերյան	10000 - 61000	14200	26000	24300
	Այրում	12000 - 25000	10000	18000	18000

2006թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ. նոյեմբերի համեմատ աճել են 3.6%:

2006թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 530 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 108, մյուս մարզերում միասին վերցրած՝ 422: 2006թ. նոյեմբերի համեմատ անհատական

բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 6.0%-ով, ընդ որում Երևանում նվազել է 4.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 9.0%-ով: 2005թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 1.9%-ով, ընդ որում Երևանում նվազել է 3.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 3.4%-ով:

2006թ. դեկտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. դեկտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2005թ.	դեկտեմբեր 2006թ.	նոյեմբեր 2006թ.
Կենտրոն	135000-900200	344300	406600	402600
Արաբկիր	90000-550100	274700	327500	323000
Քանաքեռ-Զեյթուն	67500-300100	163900	226900	219400
Նորք-Մարաշ	90000-450100	181000	197900	193900
Ավան	90000-360100	139000	185400	181200
Էրեբունի	67500-280100	138800	200600	195600
Շենգավիթ	67500-300500	170600	208400	203000
Դավթաշեն	90000-405100	171200	218700	206700
Աջափնյակ	67500-310100	156800	195900	193800
Մալաթիա-Սեբաստիա	67500-405100	154200	185400	183300
Նուբարաշեն	40500-185000	93100	119600	118600
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>40500-900200</b>	<b>180700</b>	<b>224800</b>	<b>220100</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. դեկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ նոյեմբերի համեմատ աճել են 2.1 % :

2006թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. դեկտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
			2005թ. դեկտեմբեր	2006թ. դեկտեմբեր	2006թ. նոյեմբեր
Արագածոտն	Աշտարակ	29100 - 98000	51700	85300	81200
	Ապարան	13500 - 36000	24900	29000	27900
	Թային	13600 - 36000	23500	31200	30400
Արարատ	Արտաշատ	22500 - 141000	42100	67500	64900
	Մասիս	25000 - 98000	52800	78400	74700
	Վեդի	22500 - 67500	35400	53200	50900
	Արարատ	22500 - 76800	38500	52500	51700

Արմավիր	Վաղարշապատ	54100 - 164200	75600	107100	103000
	Արմավիր	22500 - 126000	46300	75200	71200
Գեղարքունիք	Սևան	18000 - 90600	38100	50200	47900
	Գավառ	10000 - 37800	24100	32300	31800
	Մարտունի	22200 - 68000	38500	45300	43900
	Վարդենիս	11000 - 32500	21400	26800	24400
	Ճամբարակ	4500 - 32600	12500	15200	14900
Լոռի	Վանաձոր	23200 - 116800	43400	63400	60100
	Ստեփանավան	13500 - 40200	26700	31500	29900
	Մալիտակ	20000 - 58600	28500	41800	41600
	Ալավերդի	9000 - 31500	19900	24800	24500
	Տաշիր	9000 - 36500	21300	23300	23200
	Թումանյան	4500 - 18000	6700	7300	7200
	Շամլուղ	2300 - 13500	4200	4600	4600
	Ախթալա	9000 - 22500	11900	12600	12500
Կոտայք	Աբովյան	45500 - 191600	81200	123300	119500
	Նոր Հաճն	42500 - 105800	57700	84300	81700
	Բյուրեղավան	22200 - 81400	38200	61100	58500
	Եղվարդ	30200 - 90300	49600	77100	73900
	Հրազդան	18000 - 74000	31500	44200	43900
	Ծաղկաձոր	40000 - 112500	58200	86600	86400
	Չարենցավան	18000 - 79300	37900	53200	52500
Շիրակ	Գյումրի	28200 - 129000	45500	60500	59200
	Արթիկ	13300 - 62400	27500	40300	38800
	Մարալիկ	13500 - 40000	23400	25300	24800
Սյունիք	Գորիս	18000 - 79900	46300	60300	57500
	Կապան	22000 - 94000	33800	57600	56200
	Միսիան	20000 - 66400	29100	49000	48600
	Մեղրի	13500 - 44800	24600	36700	36400
	Ագարակ	13300 - 36000	19900	24100	23400
	Դաստակերտ	4500 - 18000	8600	9000	8900
Վայոց Ձոր	Վայք	26000 - 60000	31700	53200	53000
	Եղեգնաձոր	22200 - 118400	45000	65200	64900
	Ջերմուկ	26500 - 191600	31800	41600	40500
Տավուշ	Դիլիջան	26600 - 97500	35400	59100	57500
	Իջևան	22200 - 101100	40200	75100	69000
	Բերդ	20000 - 71200	26900	34100	32400
	Նոյեմբերյան	9000 - 31500	15400	27200	25700
	Այրում	5200 - 28000	10700	19200	19200

2006թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. նոյեմբերի համեմատ աճել են 3.3 %:

Ընդհանուր առմամբ, 2006թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարվել են 2254 միավոր /2741.97 հա/ հողեր, որից Երևանում` 147 միավոր /32.13 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 122 միավոր /35.88 հա/ հողեր, որից Երևանում` 30 միավոր /25.92 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 1037 միավոր /2571.88 հա/, որից Երևանում` 2 միավոր /0.33 հա/,

- բնակելի կառուցապատման հողեր՝ 734 միավոր /72.82 հա/, որից Երևանում՝ 79 միավոր /6.47 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 432 միավոր /75.06 հա/, որից Երևանում՝ 56 միավոր /20.44 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 28 միավոր /18.74 հա/, որից Երևանում՝ 10 միավոր, /4.88 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր 15 միավոր /2.81 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր 8 միավոր /0.66 հա/ ընդհանուր մակերեսով:

2006թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 2157 միավորի /2411.22 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 136 միավոր /30.99 հա/, նվիրատվության գործարքներ՝ 87 միավոր /327.97 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /1.06 հա/ և փոխանակության գործարքներ՝ 10 միավոր /2.77 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.08 հա/: 2006թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են վարձակալության իրավունքի վաճառքի 7 գործարքներ /3.39 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Վաճառված 2157 միավոր /2411.22 հա/ հողերի քանակի 46.1% կամ 994 գործարքներ /1654.61հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 36 գործարքներ /19.20 հա/, իսկ 53.6%-ը կամ 1156 միավորը /753.22 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 96 միավոր /9.96 հա/:

Հանրապետությունում 2006թ. դեկտեմբերին, 2005թ. դեկտեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 75.0%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 68.6%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 82.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 17.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 853.47 հա, որից 845.97 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2006թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	8	4.51	7	0.37	21	14.32	1	0.10	2	0.37	63	5.32	30	4.18
Արագածոտն	43	334.84	0	0.00	6	0.61	31	1.41	57	54.99	0	0.00	46	4.98	0	0.00

Արարատ	81	570.85	9	12.97	101	10.27	74	2.30	122	45.72	0	0.00	82	7.54	3	0.03
Արմավիր	115	497.07	3	0.14	4	0.34	35	1.02	100	348.91	0	0.00	53	5.56	9	0.43
Գեղարքունիք	5	2.80	0	0.00	16	1.47	25	1.99	4	3.97	0	0.00	16	1.88	2	0.30
Լոռի	3	10.84	1	0.004	3	0.30	21	0.51	85	43.08	0	0.00	3	0.28	3	0.11
Կոտայք	83	81.84	0	0.00	68	6.39	67	5.16	160	92.69	0	0.00	176	19.45	5	2.12
Շիրակ	19	59.85	1	0.01	18	1.00	22	1.49	22	18.67	0	0.00	12	0.85	11	32.85
Սյունիք	0	0.00	0	0.00	3	0.17	11	0.26	11	16.05	0	0.00	3	0.17	3	0.01
Վայոց Ձոր	17	21.86	0	0.00	1	0.36	32	1.32	12	23.37	0	0.00	6	0.78	1	0.06
Տավուշ	1	0.10	4	0.74	4	0.13	14	1.86	34	16.69	0	0.00	10	1.33	3	0.03
Ընդամենը	367	1580.05	26	18.37	231	21.41	353	31.64	608	664.24	2	0.37	470	48.14	70	40.12

Ստորև ներկայացվում է 2006թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատման հողերի								բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատման հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	29	18.63	8	4.51	1	0.02	20	14.11	8	0.56	0	0.00	0	0.00	6	0.35	1	0.21
Արագածոտն	9	0.18	0	0.00	0	0.00	9	0.18	71	336.68	43	334.84	0	0.00	6	0.61	22	1.23
Արարատ	31	6.90	4	6.64	0	0.00	27	0.26	234	589.51	81	570.85	5	6.35	101	10.27	47	2.05
Արմավիր	3	0.02	0	0.00	0	0.00	3	0.02	154	498.86	115	497.07	3	0.14	4	0.34	32	1.01
Գեղարքունիք	3	0.01	0	0.00	0	0.00	3	0.01	43	6.25	5	2.80	0	0.00	16	1.47	22	1.98
Լոռի	10	0.19	1	0.004	0	0.00	9	0.19	18	11.46	3	10.84	0	0.00	3	0.30	12	0.32
Կոտայք	9	0.40	0	0.00	0	0.00	9	0.40	209	92.98	83	81.84	0	0.00	68	6.39	58	4.75
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	59	61.85	18	59.35	1	0.01	18	1.00	22	1.49
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	0.43	0	0.00	0	0.00	3	0.17	11	0.26
Վայոց Ձոր	4	0.39	0	0.00	0	0.00	4	0.39	46	23.15	17	21.86	0	0.00	1	0.36	28	0.93
Տավուշ	16	1.13	4	0.74	3	0.10	9	0.29	7	1.70	1	0.10	0	0.00	1	0.03	5	1.57
Ընդամենը	114	27.85	17	11.89	4	0.12	93	15.85	863	1623.43	366	1579.55	9	6.5	227	21.29	260	15.80

Հանրապետությունում 2006թ. դեկտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք /0.50 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 3.2 անգամ: Ընդ որում Երևանում նվազել է 84.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 3.8 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 3.8 անգամ, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 70.7%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 10.0 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 33.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. նոյեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների

վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	30	185.65	34.0	777.8	192.3	47	41.31	362.2	6772.5	2384.4
Ապարան						5	8.16	90.6	767.6	352.3
Թալին	13	149.19	4.2	207.7	78.5	2	1.61	90.6	758.5	341.1
Ծաղկահովիտ						3	3.91	77.0	948.2	164.2
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	32	57.18	35.5	2701.4	1351.7	52	15.78	335.1	5418.0	1284.4
Մասիս	23	76.41	30.0	5057.5	599.8	32	7.60	181.1	6772.5	1648.5
Վեդի	26	437.27	17.4	119.1	26.6	35	19.74	203.8	4515.0	1062.2
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	33	16.99	31.9	1089.0	547.1	30	20.86	294.3	4063.5	830.5
Բաղրամյան	33	364.15	20.3	73.0	34.7	25	301.85	90.6	677.3	518.1
Վաղարշապատ	49	115.92	17.8	2464.0	244.0	44	25.82	443.7	9030.0	1370.5
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ								190.2	496.7	338.1
Ճամբարակ	3	1.70	168.1	660.0	496.0			45.3	541.8	143.2
Մարտունի						2	0.18	45.3	1806.0	458.2
Սևան	1	0.10	480.0	480.0	480.0			45.3	451.5	188.3
Վարդենիս	1	1.00	184.0	184.0	184.0	2	3.79	27.2	532.8	217.5
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի						61	32.44	163.0	2483.3	966.6
Գուգարք	2	0.84	1210.0	1210.0	1210.0	17	2.81	226.4	2709.0	895.8
Սպիտակ								226.4	1490.0	493.6
Ստեփանավան	1	10.00	450.0	450.0	450.0	5	4.86	90.6	2257.5	350.1
Տաշիր						2	2.96	45.3	451.5	197.8
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	27	48.01	37.8	1113.0	310.1	87	41.93	271.7	11287.5	3020.3
Եղվարդ	18	14.46	42.6	1131.5	189.8	47	41.73	172.1	11287.5	2129.1
Հրազդան	38	19.37	126.3	4133.3	437.9	26	9.04	113.2	2709.0	795.2
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						13	12.28	249.0	1693.1	423.7
Ամասիա								36.2	237.0	106.6
Անի	6	33.12	75.4	2320.0	873.0	5	4.83	108.7	361.2	212.2
Աշոցք								45.3	112.9	109.2
Արթիկ	12	26.23	168.0	330.0	228.5	4	1.55	63.4	1083.6	164.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						2	4.21	90.6	673.3	326.5
Կապան								54.3	841.6	214.6
Մեղրի						4	0.52	181.1	1784.2	434.6
Սիսիան						5	11.31	45.3	631.2	204.1
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	9	20.46	31.6	423.7	145.2	9	18.89	117.7	2524.8	1235.1



Վայք	8	1.40	104.6	133.3	114.7	3	4.49	54.3	1430.7	490.2
Տավուշի մարզ										
Բերդ						12	2.63	45.3	841.6	330.4
Իջևան	1	0.10	473.0	473.0	473.0	2	2.12	240.0	1683.2	780.3
Նոյեմբերյան						20	11.94	45.3	3509.5	471.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. նոյեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	2100.0	179.3	2583.3	1762.6	43	47176.8	113.2	3612.0	2157.4
Ապարան						1	1110.0	113.2	632.1	180.1
Թալին	3	4030.0	72.9	233.1	140.8	2	1540.0	45.3	361.2	83.1
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
Արարատի մարզ										
Արտաշատ	96	97913.0	176.0	426.0	295.8	20	17900.0	135.8	2709.0	828.4
Մասիս	5	4800.0	301.5	1482.6	747.6	39	35433.0	135.8	9030.0	1041.8
Վեդի						20	19275.0	113.2	993.3	601.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	1050.0	1575.0	1575.0	1575.0	16	16130.0	135.8	2257.5	975.5
Բաղրամյան	2	1121.0	299.7	360.0	329.9	4	5650.0	81.5	270.9	120.1
Վաղարշապատ	1	1250.0	80.0	80.0	80.0	33	33830.0	135.8	4515.0	1338.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	496.0	1304.1	1304.1	1304.1	3	2710.0	135.8	903.0	330.1
Ճամբարակ	8	8000.0	145.0	145.0	145.0			45.3	135.5	87.5
Մարտունի						8	11060.0	90.6	451.5	199.8
Սևան	1	600.0	683.1	683.1	683.1	3	1752.0	90.6	903.0	128.5
Վարդենիս	6	5619.0	175.0	1351.4	384.6	2	3310.0	45.3	225.8	92.5
Լոռու մարզ										
Ալավերդի						3	2820.0	67.9	270.9	110.0
Գուգարք								67.9	2347.8	516.6
Սպիտակ								63.4	451.5	111.1
Ստեփանավան	3	2955.0	93.5	277.3	216.0			45.3	270.9	90.4
Տաշիր								45.3	135.5	66.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	2466.0	300.0	2309.6	1113.8	71	65527.0	135.8	6772.5	1598.9
Եղվարդ	4	3200.0	1481.3	1481.3	1481.3	96	121182.0	135.8	6772.5	1725.4
Հրազդան	61	58280.0	145.0	1700.0	215.1	9	7800.0	135.8	9030.0	1114.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	14	9169.8	179.6	4444.4	1968.4	4	2149.0	113.2	1535.1	300.1
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի								67.9	180.6	90.5
Աշոցք						1	800.0	40.8	135.5	56.8

Արթիկ	4	852.0	70.0	700.0	427.2	7	5520.0	67.9	925.6	142.5
Սյունիքի մարզ										
Գորիս	3	1700.0	416.7	2000.0	1045.6			67.9	541.8	218.3
Կապան								67.9	632.1	193.6
Մեղրի								67.9	406.4	108.8
Սիսիան						3	1731.0	67.9	406.4	130.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	5620.0	67.9	1128.8	250.4
Վայք	1	3600.0	73.6	73.6	73.6			77.0	632.1	110.2
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան	1	300.0	403.3	403.3	403.3	8	11499.0	67.9	1354.5	358.4
Նոյեմբերյան						2	1780.0	45.3	632.1	114.3

2006թ. դեկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 36 գործարքներ 5.34 հա մակերեսով, ընդ որում 18-ը՝ Արարատի /3.39 հա/, 11-ը՝ Գեղարքունիքի /0.55 հա/ և 7-ը՝ Լոռու /1.40 հա/ մարզերում:

2006թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 731 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.9%: Ընդ որում, վարձակալության գործարքների 32.6% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2006թ. դեկտեմբերին 2006թ. նոյեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 1.9%-ով, իսկ 2005թ. դեկտեմբերի համեմատ՝ 19.0%-ով:

2006թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 67 բնակարանների, 18 անհատական բնակելի տների, 269 հասարակական, 37 արտադրական նշանակության օբյեկտների, 338 միավոր /2438.98 հա/ հողերի, 3 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2006թ. դեկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 43 վարձակալության գործարքների քանակը 2006թ. նոյեմբերի համեմատ նվազել է 27.1%-ով, իսկ 2005թ. դեկտեմբերի համեմատ՝ 84.8%-ով:

2006թ. դեկտեմբերին հանրապետությունում վարձակալված 2438.98 հա հողերից 6.27 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2432.72 հա հողերի 98.9% կամ 2405.27 հա, կազմում են գյուղատնտեսական նշանակության, 3.29 հա՝ բնակավայրերի, 8.36 հա՝ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, 12.00 հա անտառային, 0.03 հա արդյունաբերական օբյեկտների, 3.75 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների, 0.01 հա կապի օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Կոտայքի մարզում՝ 1203.85 հա, որից 1200.92 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1352.00 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. դեկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	21	35.25
Արարատ	0	0.00	11	89.18
Արմավիր	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	22	60.66
Լոռի	0	0.00	23	227.09
Կոտայք	11	1146.00	27	54.92
Շիրակ	1	96.00	54	327.38
Սյունիք	2	110.00	10	238.44
Վայոց Ձոր	0	0.00	3	0.13
Տավուշ	0	0.00	4	20.23
<b>Ընդամենը</b>	<b>14</b>	<b>1352.00</b>	<b>175</b>	<b>1053.28</b>

2006թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1658 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.4%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. նոյեմբերի համեմատ աճել է 18.2%-ով, իսկ 2005թ. դեկտեմբերի համեմատ՝ 49.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.6%/, առանձնատների /21.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.0%/ և հողերի /11.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 700 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. նոյեմբերի համեմատ աճել է 16.9%-ով, իսկ 2005թ. դեկտեմբերի համեմատ՝ 35.7%-ով:

2006թ. դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 302.16 հա հողեր, որից 3.17 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 97.8% կամ 295.63 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Վայոց Ձորի մարզում՝ 134.61 հա գյուղատնտեսական նշանակության:

2006թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 10 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2006թ. նոյեմբերի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 15.8%-ով, իսկ 2005թ. դեկտեմբերի համեմատ աճել է 6.7%-ով: 2006թ. դեկտեմբերին մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի՝ 31.3%, ցածրը՝ 6.3-ական %, Լոռվա, Կոտայքի և Տավուշի մարզերում:

2006թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1972 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. նոյեմբերի համեմատ աճել է 5.9%-ով, իսկ 2005թ. դեկտեմբերի համեմատ՝ 10.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /31.6%/:

### **ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**